ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/62

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գ. Ավագյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/122» ծածկագրով գնանշման հարցում, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/122-2»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2840-2020 գրությամբ «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 24.02.2020թ. թիվ 01/61-3465 գրության հիման վրա, 26.02.2020թ.-ին «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 27.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/62 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել www.gnumner.am կայքում:

05.03.2020թ.-ին, 16.03.2020թ.-ին և 27.03.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.03.2020թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 24.02.2020թ. թիվ 01/61-3465 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 30.09.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/122-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետերի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Ընկերության կողմից պայմանագրով սպանձնած՝ Երևանի Արաբկիր վարչական շրջանի թվով երկու բակերի հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների կատարման և փորձաքննությունների եզրակացությունների տրամադրման պարտավորությունները՝ 850000 (ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ արժեքով ընդհանրապես չեն կատարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017

թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 27.02.2020թ.-ի գրությամբ դիմել է «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2840-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 05.03.2020թ.-ին հրավիրված նիստին:

Մասնակիցը ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Երևանի քաղաքապետի 2020 թվականի փետրվարի 24-ի թիվ 01/61-3465 գրության, «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հայտնում եմ, որ Երևանի քաղաքապետարանի և «Էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված N «Ե-Բ-ԳՀԱՇՁԲ-19/122-2» պայմանագրին կից Հավելված 1-ով հաստատված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի /այսուհետ՝ Տեխնիկական բնութագիր/ համաձայն՝ «էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ի կողմից ամբողջությամբ իրականացվել են Վրացական 15-17 շենքերի և Մամիկոնյանց 49, 49/1 և 51 շենքերի համատեղ բակերի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

Տեխնիկական բնութագրին համապատասխան՝ վերջիններս /յուրաքանչյուր բակից 7-ական օրինակ նախագիծ և 7-ական օրինակ նախահաշիվ, ինչպես նաև մեկ էլ. կրիչ/ 2019 թվականի դեկտեմբերի 25-ին գրությամբ հանձնվել է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջան /գրությունը ներկայացվել է նիստի ժամանակ, ստացականը հավելյալ կցվում է/:

Վրացական 15-17 շենքերի և Մամիկոնյանց 49, 49/1 և 51 շենքերի բակերի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը սահմանված կարգով

ներկայացվել են քաղաքաշինական պարզ փորձաքննության, և տրվել են փորձագիտական դրական եզրակացություններ՝ համաձայն ՀՀ կառավարություն 2015 թվականի մարտի 19-ի թիվ 526-Ն որոշման հավելված 2-ի 42-րդ կետի, որով երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին /եզրակացությունները ներկայացվել են նիստի ժամանակ/:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ի կողմից իրականացվել են նաև Տեխնիկական բնութագրով չնախատեսված աշխատանքներ բակային տարածքներում տեղագրագեոդեզիական հանույթի և Մամիկոնյանց 49, 49/1 և 51 շենքերի բակում գոյություն ունեցող հենապատերի տեխնիկական վիճակի հետազննության աշխատանքներ: Վերջիններիս իրականացման անհրաժեշտություն ի հայտ էր եկել Արաբկիր վարչական շրջանի ներակայացուցիչների հետ բակային տարածքներ կատարած համատեղ այցի /10.10.2019թ./ ընթացքում տրված բանավոր հանձնարարականի շրջանակներում /կցվում են արտոնագրված գեոդեզիական աշխատանքներ և լիցենզավորված տեխնիկական վիճակի հետազննություն իրականացնող կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերը, ինչպես նաև վերջիններիս կողմից տրված եզրակացությունն ու գծագրերը/:

Գեոդեզիական հանույթի գծագրում ներկայացված են ոչ միայն տարածքի նիշերի, այլև բակային տարածքների առկա իրավիճակի վերաբերյալ, մասնավորապես՝ նշված են գոյություն ունեցող ծառերի տեղադիրքը, անցնող գազատարի և էլեկտրական լուսավորության հենասյունների վերաբերյալ տեղեկատվությունը /ՃՇ-4 թերթեր/՝ Տեխնիկական բնութագրին համապատասխան: Ավելին, «էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ի կողմից բակային տարածքներում իրականացվել են նաև մանրամասն չափագրության աշխատանքներ, որոնց համաձայն մշակվել են ապամոնտաժման հատակագծերը /ՃՇ-5 թերթեր/:

Հայտնում եմ, որ համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանով հաստատված Հավելվածի 5-րդ բաժնի 1-ին կետի 6-րդ ենթակետի՝ գոյություն ունեցող ստորգետնյա հաղորդակցուղիների և ցանցերի ուղեգծով իրավիճակային հատակագիծը նախագծային փաստաթղթի կազմում ելակետային տվյալ է, ոչ թե նախագծային փաստաթղթի բաղկացուցիչ բաժին կամ մաս: Ավելին, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի 596-Ն Հավելված N 1-ով հաստատված կարգի 38-րդ կետի՝ Կառուցապատողը /Պատվիրատուն/ մինչև նախագծային

աշխատանքներ սկսելը դիմում է իրավասու մարմին /մատակարար կազմակերպություններ/՝ տեխնիկական պայմաններ և ելակետային տվյալներ ստանալու նպատակով:

Քանի որ Տեխնիկական բնութագրով սահմանված չէ ստորգետնյա հաղորդակցուղիների և ցանցերի ուղեգծով իրավիճակային հատակագծի ներկայացում, իսկ տեխնիկական պայմանների և ելակետային տվյալների ձեռք բերումը Պատվիրատուի պարտականություն է օրենսդրության համապատասխան, հետևաբար ստորգետյա ելակետային տվյալների բացակայությունը չի կարող հանդիսանալ պայմանագրով սահմանված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների չկատարման հիմք՝ պայմանագրի էական խախտում /ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդված/:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ 2019 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/122-2 պայմանագրով աշխատանքների վերջնաժամկետ էր սահմանվել մինչև հոկտեմբերի 31-ը, որը, նոր աշխատանքների ի հայտ գալով պայմանավորված, պայմանագրի 7.6-րդ կետի համաձայն՝ 2019 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված Համաձայնագիր 1-ով երկարաձգվել է՝ վերջնաժամկետ սահմանելով 2019 թվականի նոյեմբերի 30-ը, մինչդեռ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 21-րդ կետի ը) ենթակետի՝ աշխատանքների կատարման համար ժամկետ ի սկզբանե սահմանվում է 45 օր /ԵՔ- ԳՀԱՇՁԲ-19/122-2 պայմանագրով սահմանված էր երեսունմեկ օր/:

Ավելին, Պատվիրատուի /Արաբկիր վարչական շրջանի/ ներկայացուցիչների հետ բակային տարածքներ հոկտեմբերի 10-ին համատեղ այցելության ընթացքում տրված հանձնարարականին ու պահանջներին համապատասխան՝ հոկտեմբերի 25-ին Վրացական 15-17 և Մամիկոնյանց 49, 49/1 և 51 շենքերի բակային տարածքների հիմնանորոգման էսքիզային նախագիծ-առաջարկները առձեռն ներկայացվել են համաձայնեցման Արաբկիր վարչական շրջանի ճարտարապետական բաժին: ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի որոշման Հավելված N 1-ով հաստատված կարգի 136-րդ կետի համաձայն՝ էսքիզային նախագծի մերժման կամ հաստատման համար սահմանվում է 5-օրյա ժամկետ, մինչդեռ Պատվիրատուի կողմից մինչև 2019 թվականի նոյեմբերի 25-ը վերջիններիս վերաբերյալ քննարկումներ չեն կազմակերպվել, դիրքորոշում կամ տեսակետ չի արտահայտվել վարչական շրջանի ղեկավարի բացակայության պատճառով: Պայմանագրով ստանձնած մեր պարտավորությունները իրականացնելու /ավարտելու համար/ 2019 թվականի նոյեմբերի 25-ից շարունակել ենք նախագծանախուսհաշվային

փաստաթղթերի մշակմուն աշխատանքները՝ ներկայացված էսքիզային նախագծի-առաջարկի համաձայն՝ ստանալով բանավոր համաձայնություն Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման /ճարտարապետական բաժնի/ աշխատակցի կողմից: Վերջինիս կողմից միայն բանավոր առաջարկ է արվել Վրացական 15-17 բակային տարածքներում ավելացնել կանաչ գոտիները, ինչն էլ մեր կողմից իրականացվել է Աշխատանքային նախագծի մշակման ժամանակ /կցվում են համապատասխան էսքիզային և բարեկարգման հատակագծերը/: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետում չէր տրամադրվել տեսակետ և/կամ ճարտարապետահատակագծային առաջադրանք /ՃԱ/ էսքիզային նախագծի վերաբերյալ, ավելին, վերջինիս պահանջով ստիպված էինք դադարեցնել աշխատանքները մինչև էսքիզային նախագծի հաստատումը Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի կողմից, հետևաբար մինչև 2019 թվականի նոյեմբերի 30-ը /պայմանագրով սահանված ժամկետ/ ստանձնած պարտականություններն իրականացնելը գործնականորեն անհնար էր:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-ն որոշման Հավելված N 1-ով հաստատված կարգի 68-րդ կետի՝ բարեկարգման /կանաչապատման/ նախագծային փաստաթղթերը մշակվում են ճարտարապետահատակագծային առաջադրանքի (նախագծային թույլտվության) համապատասխան, որտեղ սահմանվում են քաղաքաշինական գործունեության տվյալ օբյեկտին ներկայացվող նախագծման պարտադիր պահանջները, պայմաններն ու սահմանափակումները՝ համապատասխան ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-ն որոշման Հավելված N 1-ով հաստատված կարգի 4-րդ կետի 14-րդ ենթակետի: Վերջինս, ինչպես նաև օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների /ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման և այլն/ նախագծման տեխնիկական պայմանները և ելակետային տվյալներն օրենսդրությամբ սահմանված կարգով Պատվիրատուի /Կառուցապատողի/ կողմից երբևէ չեն տրամադրվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում եմ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ «էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ի կողմից իրականացվել են ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/122-2 պայմանագրով ստանձնած պարտավորությունները Տեխնիկական բնութագրին համապատասխան /հիմք քաղաքաշինության բնագավառում փորձաքննություն իրականացնող լիցենզավորված կազմակերպությունների կողմից տրված փորձագիտական եզրակացությունները/, հետևաբար ընկերության կողմից պարտավորությունների

խախտումը և/կամ էական խախտում ընկերության կողմից չի կատարվել համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդված և 466-րդ հոդվածի 2-րդ կետ/:»:

4. <u>ՍՑ-LO-2020/62 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ի միջև 30.09.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/122-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 31.10.2019թ.-ը:

Ընկերության կողմից 25.12.2019թ.-ին թիվ 22 գրությամբ Պատվիրատուին է ներկայացվել է իրականացված ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Մամիկոնյանց 49, 49/1 և 51, ինչպես նաև Վրացական 15-17 շենքերի բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Պատվիրատուն (Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարը) 16.01.2020թ.-ի թիվ 25/01-128521 գրությամբ Մասնակցին տեղեկացրել է վերջինիս կողմից 25.12.2019թ.-ին թիվ 22 գրությամբ ներկայացրած փաստաթղթերի Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ:

www.gnumner.am համացանցային կայքում 21.02.2020թ.-ին հրապարակված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/122-2» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ի միջև 30.09.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/122-2» ծածկագրով պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից 21.02.2020թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.02.2020թ. թիվ 26/26-1/2840-2020 գրությամբ «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը

պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Երևանի քաղաքապետարանի և «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ի միջև 30.09.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/122-2» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 31.10.2019թ.-ը:

Ընկերության կողմից 25.12.2019թ.-ին թիվ 22 գրությամբ Պատվիրատուին է ներկայացվել է իրականացված ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Մամիկոնյանց 49, 49/1 և 51, ինչպես նաև Վրացական 15-17 շենքերի բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Պատվիրատուն (Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարը) 16.01.2020թ.-ի թիվ 25/01-128521 գրությամբ Մասնակցին տեղեկացրել է վերջինիս կողմից 25.12.2019թ.-ին թիվ 22 գրությամբ ներկայացրած փաստաթղթերի Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ:

www.gnumner.am համացանցային կայքում 21.02.2020թ.-ին հրապարակված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/122-2» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ի միջև 30.09.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/122-2» ծածկագրով պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից 21.02.2020թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը):

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Պայմանագրով Մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար: Սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Պատվիրատուն 16.01.2020թ.-ի թիվ 25/01-128521 գրությամբ Մասնակցին տեղեկացնելով վերջինիս կողմից 25.12.2019թ.-ին թիվ 22 գրությամբ ներկայացրած փաստաթղթերի Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու փաստի մասին, տրամադրել է ողջամիտ ժամկետ, որպես Պատվիրատուի համար ընդունելի ժամկետ՝ աշխատանքը Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար: Այս փաստի առկայության պարագայում, միայն հնարավոր կլիներ փաստել Պայմանագրի 2.1.2 կետի «ա» ենթակետով սահմանված դրույթների կիրառման մասին, որն էլ, իր հերթին կհանգեցներ ժամկետների խախտմանը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Պայմանագրի 2.1.2 կետի «ա» ենթակետի համաձայն՝ եթե կատարվել է պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք, ապա Պատվիրատուն իրավունք ունի չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց

փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը, հարկ է համարում հավելել, որ պետական գնման պայմանագրի կատարման/չկատարման արդյունքների վերաբերյալ պետք է կազմվի եզրակացություն, որն էլ պետք է լինի ՀՀ ֆինանսների նախարարի 20.05.2017թ.-ի թիվ 228-Ն «պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևը հաստատելու և ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 180-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանով սահմանված պահանջների պահպանմամբ՝ ստորագրված գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից:

Կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուն Մասնակցին (կատարողին) չի տրամադրել ողջամիտ ժամկետ՝ անպատշաճ որակի աշխատանքը Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում Պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինելու համար, որիպիսի պայմաններում խախտվել են Պայմանագրի 2.1.2 կետի «ա» ենթակետով սահմանված դրույթների պահանջները, նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.02.2020թ. թիվ 26/26-1/2840-2020 գրությամբ «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/62 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ